



Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 14

— Հ Ե Ր Ա Ր —

2 ԱՊՐԻԼ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ		ԳԱՌԱԳԱՅ ՀԱՄԱՐ		ԱՐՏԱՍԱՀԱՆՈՒ	
Տարեկան	50 Ղր.	Տարեկան	54 Ղր.	Տարեկան	12 Տր.
Վեցամսեայ	25 »	Վեցամսեայ	27 »	Վեցամսեայ	6 »

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՈՅ ԵՒ ԸՆԿ

ՄԵԾ ՎԱԶԱՌԱՅՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՅՆԵՐՈՒ, ՀԼԹԱՅՆԵՐՈՒ ՆԻ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին տակ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՈՅ անունը կեղծող կարգ մը նորեկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը երջին :

ՍԱՐԳԻՍՈՅ ժամացոյցները զերմապէս կը յանձնարարուին ինչպէս նաեւ ԶԵՆԻԹ՝ քե՛
Կ. Պոլիս, եւ քե՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին զոհացնելի պայմաններով :

Մագիթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բարիզի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգեւին արժանացած են :


Հասց 40 փարս

ԱՐՏՈՂԱՏԷՐ — ԱՐՄԻՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(Մարիան) مطبعه — باب عالی جادوسى ٣٨

ՏԻՍԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. ՍԱՐԵԱՆ

Կ. Պոլիս Գապը-Այի հասցէի քիւ 38



Անկարելի է որ ընտանիք մը առանց կարի մեքենայի մնայ, ըստ էական կէտն է լաւ մեքենայ մը ունենալ, որովհետեւ լաւ մեքենայ մը անթիւ և անհամար ծառայութիւններ կը մատուցանէ, մինչդեռ զէշ տեսակէ մեքենայ մը անվերջ դժգոհութեանց եւ տաղտուկի աղբիւր մըն է:

Բոլոր աշխարհ գիտէ թէ՛

Ս Ի Ն Կ Է Ր

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

THE SINGER

MANUFACTURING COMPANY



Ձեռքի, ոտքի ու ոտքի և ձեռքի միանգամայն մեքենաներ կը գտնուին

մեքենան լաւագոյն է. սոյն մեքենան ամենէն կատարելագործուածը, հաստատունը եւ դիւրագործելին ըլլալուն բովանդակ աշխարհի

մէջ՝ ամէն մարդ Սինկերի մեքենան կը գնէ:

Սինկերի մեքենաները կը ծախուին մի միայն Սինկեր Ընկերութեան վաճառատանց մէջ

ՀԱՅԹԱՅԹԻՉ ԿԱՅԾ. ՊԱԼԱՏԱՆ

- | | |
|----------------|--|
| ԲԵՐԱ. | (1. Մեծ փողոց, Պօռ Մարշէի դէմ, Թիւ 343 եւ 343 կրկին . |
| | (2. Մեծ փողոց, Կալաթա Սէրայի Լիւէին դէմ. |
| ԿԱԼԱԹԱ | (1. Սինկեր խան, Թիւնէի ետեւը. |
| | (2. Գարաքէօյ, Թրամվէյի կայարանին դէմ. |
| ՊՈԼԻՍ | (1. Սուլթան համալ . |
| | (2. Սուլթան Պէյազիտ, Թրամվէյի կայարանին դէմ, Թիւ 13 . |
| ՍԿԻՒՏԱՐ | Չարչը Պօյու, Թիւ 120 . |

Կատարեալ երաժիշտաւորութիւն

Որսանաձիւղեր զաւանճեալ բոլոր ֆաղափներու մէջ:

Սինկերի Ընկերութեան Կեդր. վարչատեղին կը գտնուի Բերա, Մեծ փողոց, Թիւ 343 եւ 343 կրկին, Տիւղօղլուի տունը:

ՖԷՆԻՔՍ ՕՔԲԻՇԻԷՆ

ԿԱՅԾ. ԹԱԳ. ԱՌԱՆՁՆԱՇՆՈՐՀԵԱԼ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԻՄՆՈՒԱԾ 1860 ԻՆ Ի ՎԻԷՆԱ.

ԿԵԱՆՔԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

31,008,000 Ժրանգ



ՀՐԴԵՀԻ ՃԻԻՂ

Դրամագլուխ եւ Պահեստի գումար

17,000,000 Ժրանգ

- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ ամէն տեսակ շէնք, ապրանք եւ վարասիք:
- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կը կնքէ ամէն տեսակ ապահովագրութիւնք մարդկային կանքի վրայ:
- ՖԷՆԻՔՍ** Լաւագոյն պայմաններով կ'ապահովագրէ, ամէն տեսակ ապրանք՝ չողհնաւի՝ եւ առաջատանաւի վրայ:

Ընկերութեան դրամատունն է ԲԻԷՏԻ ԼԻՅՆԷ, Ընդհանուր գործակալութեան գրասենեակն է Պոլիս, Ալեանաք խան, Թիւ 11—16:

Ընկերութիւնն կ'ընդունի ի գաւառս պատուաւոր ներկայացուցիչներ:

Լիազօր ներկայացուցիչ

Գ. Յ ՐԱՏԵԱՆ



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԶԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ Թ/հ 14

ՇԱԲԱԹ

2 Ապրիլ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Կարապետ փանոսեան եւ ժողովուրդին համակրանք. (Խմբագրական). — ՎԱՀԱՆ
ԹՕՇԻԿԵԱՆ : Կնոջ Հոգեբանութիւնը . — ԼԻՕՆ : Կին լուսանկարիչ . — ԲԷՌԱԶԻԷՆ :
Կիրակիի Քօնսեռը . — ԼԻԼԱ : Յիշատակ (Ոսանաւոր) . — ՀՐԱՆԴ ԱՇՈՏ : Օրհնած,
աս չ'եղաւ (Ֆանթեզի) . — HIRONDELLA : Զուարթ ժամեր . — ԶԱԻԱՆ ՄՈՅՐԵԱՆ :
Աւխարհի մեջ (Դէս ու Դէն) : 100,00 Տարի Ստանակոյսի մը մեջ . (Հանրագիտակի քեր.
բուն) LOUIS BOUSSENARD (Թարգմ.) Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ :



ՀԱՆԳՈՒՑԵԱԼ
ԿԱՐԱՊԵՏ Յ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՀԻՄՆԱԳԻՐ ԵՒ ՆԱԽԵՒՆ ԱՐՏՕՆԱՏԷՐ
« ՄԱՆՁՈՒՄԷՒ ԷՖԲԵՍՐ » ՀԱՅԱԹԵՐԹԻ

ԿԱՐԱՊԵՏ ՓԱՆՈՍԵԱՆ

Ե Ի

ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՄԱԿՐԱՆՔԸ

Ոչ մէկ դադաղ սա վերջին ժամանակներուն մէջ ժողովրդային այնքան ցայտուն համակրանքի մը արժանացած էր կրնանք ըսել, որքան ողբալիքալ Փանոսեանին պարզուկ դադաղը որ նախընթաց կիրակի իր շաբթը հաւաքած էր Մայր եկեղեցիին մէջ, նըմանը շատ քիչ տնգամ տեսնուած ժողովրդային ստուար բազմութիւն մը, ամէն դասակարգէ և ամէն տարիքէ, հակառակ տեղացող անձրեւին:

Պոլսահայ լրագրութեան ամենէն ժողովրդական թերթին հիմնադիրին՝ որ ամբողջ յիսուն տարիներ իր գրիչը շարժած էր հանրութեան օգուտին համար, որ աներեւակայելի դործունէութիւն մը ցոյց տուած էր, մինչև իր անձը նուիրելու աստիճան ժողովուրդին բարոյական և մտաւորական յառաջդիմութեանը սիրոյն, ասկէ աւելի պերճախօս յարգանք մը չէր կրնար ըլլալ, և ասկէ աւելի անկեղծ արտայայտութիւն մը չէր կրնար երեւան գալ:

Մայր եկեղեցիի հոյակապ տաճարին գմբէթներուն տակ, ուր արձագանգ դտած են ա՛յնքան, եկող գացող Պատրիարքներու սրբազան բեմաստացութիւններն ու պերճախօս քարոզութիւնները, ուր այնքան փարթամ ննջեցեալներու հանդիսաւոր արարողութիւններ կատարուած են գուցէ, և ուր լսուած են յաճախ աստուածաբան քարոզիչներու՝ ոսկիներու արժէքով գնուած պուռու տախօս դամբանականները այս ինչ կամ այն ինչ ջոխն ու հարուստին դադաղին առջև, ո՛չ մէկ հետաքրքրութիւն այնքան խորունկ ազդեցութիւն մը պիտի ներգործէր ժողովուրդին և այնքան խորհրդաւոր ու միտքիք հանգամանք մը պիտի առնէր ան՝ որքան Փանոսեանի դադաղին առջև, Երուսաղէմի Պատրիարքութեան Պոլսոյ արժանընտիր փոխանորդին, Երէցեան Սրբազանի արտաստեղծ դամբանականը, որ շա՛տ բոն խօսեցաւ հազարաւոր յաւարկաւորներու ուրտին, կարծես նպատակ ունենալով իրեն՝ զգացնել ժողովուրդին թէ, ճշմարիտ փառքերն անոնք չեն միայն որ դրամով կը գնուին, և կամ թէ մե՛ծ մարդերն անոնք չեն միայն որոնք եկեղեցիներ ու դպրոցներ կը շինեն անուշիկ շահերով լեցուցած իրենց քսակներուն թափթփուքովը, և անոնց դադաղներուն առջև, աւա՛ղ, վարձկան եկեղեցականներ չեն վարանիր ներբողալից ճոռամաբանութիւններ շալկելու:

Սաղիմական Սրբազանին այս դամբանականը անոր համար մանաւանդ խորհրդաւոր տպաւորութեան մը տակ ձգեց յաւարկաւորները, որովհետեւ անոնց սրտէն էր որ կը խօսէր և ինչ որ համակրելի Սրբազանին բերնէն կը ծուրէր, ճշմարիտ և անկեղծ պատկերացումն էր հանդուցեալին արդիւնաւոր կեանքին, որուն չեմ գիտեր ի՞նչ նպատակով, իրենց պատուաբեր ! բացակայութեամբը

ստուեր ամեկ ուղեցին անշուշտ Պոլսոյ բարձրաստիճան եկեղեցականները, նոյն իսկ անոնք, որոնք տիրացուներու դամբանականները խօսելու անըմբռնելի փութկոտութիւնը ունեցած էին :

Փանոսեան փառքի մարդ չէ՛ր արդէն, և մինչև անգամ իր կենդանութեանը փափաք յայտնած էր որ իր տաներէց քահանան միայն իր մեռելական կարգը կատարէ : Անիկա ժողովուրդին մարդն էր, իր բովանդակ փառքը անոր մէջ կը փնտռէր և իրեն համար որ այնքան խիղախօրէն ջանքալուծ էր կեղծաւոր և ամպարիշտ եկեղեցականներուն ընթացքն ու կենցաղը, նշանակութիւն չէին կրնար ունենալ բնականաբար անոնց կողմէ ըլլալիք պատիւներն ու յարգանքները :

Այդ բարձրաստիճան եկեղեցականներուն բացակայութիւնը հետեւաբար աւելի մեծցուց Փանոսեանը, նոյն իսկ իր դադաղին մէջ, երբ անոր շուրջը համախմբուած էր իր սիրական ժողովուրդը, որուն համար գրիչ չարժած և կեանք մաշեցուցած էր :

Գրչի աշխատանքի մը համար այդ միայն պէտք էր արդէն և ժողովուրդային համակրութիւն մը բաւական էր նսեմացնելու ամէն կեղծապատիր հանդիսութիւնք, որոնց հեղինակները պիտի ըլլային այդ եկեղեցականները անշուշտ :

Տարբեր խնդիր սակայն, երբ Փանոսեանի դադաղը կը փռուաւ որուէր ժողովուրդին ներկայութիւնովն ու եկեղեցականներուն բացակայութիւնովը, երբ կը մեծնար ան աւելի, ինչպէս ըսինք, իր դադաղին մէջ իսկ, մեր ամէնուն աչքին առջև, միւս կողմէ կը պղտիկնային բոլոր այդ բարձրաստիճան եկեղեցականները, նոյն իսկ սա նորերուկ վարդապետները, և անգամ մըն ալ երեւան կը բերէին իրենց ազտուա ու շահամուղ ոգին :

Ո՛րքան միամիտ առարկութիւն մը պիտի ըլլայ ըսել թէ նոյն այդ եկեղեցականները ճամբատուպէս անկեղծ եղած ըլլանուն համար չէին ուղած պատուել հանգուցեալին դադաղը, և թէ գիտնալուն համար որ Փանոսեան չէր սիրելի զիրենք, խոհեմութիւն համարած էին չը մասնակցիլ գրչի այդ վաղեմի վաստակաւորին յուզարկաւորութեան : Եթէ երբեք գիտնային սակայն թէ պիտի վճարուէին ու վարձատրուէին, — ինչպէս պիտի ըլլար արդէն — տարակոյս չը կար թէ չնչասպառ իսկ պիտի վաղէին մայրաքաղաքիս ո՛ր թաղերուն մէջ ալ գտնուած ըլլային իրենք և հեռուով պիտի հասնէին Մայր եկեղեցիին խորհրդարանը, պահ մը շունչ և հանգիստ առնելու :

Մանգոռմէի երկուշաբթի օրուան թիւը, որուն մէջ նկարագրուած էր Փանոսեանի յուզարկաւորութիւնը, և որ մի և նոյն ատեն կը պարունակէր կնոյ մը մեռելական հանգէսին նկարագրութիւնը, կատարեւապէս Ազգին առջև կը պարզէր այդ կարգի եկեղեցականներուն ներքին պատկերը :

Մեռնող տիկինը չենք ճանչնար և ո՛չ ալ գիտենք թէ ի՞նչ բարիքներ ըրած է Ազգին, միայն սա կրցանք հասկնալ թէ երեւակայա՞տ ո՞ր դեղին ոսկիները ի՞նչ զօրաւոր ազդեցութեամբ տառի դադաղին շուրջ բոլորել տուած էին մայրաքաղաքիս հեռաւոր ու մերձաւոր թաղերէն մինչև Սկիւտար, մեր պատկառելի եկեղեցականները, որոնք գրամին սիրոյն անշուշտ, իրենց միւս խռատփող կարգակիցներուն պէս, — բանաւոր բուցառութիւնները յարգելով — անհամեմատ կերպով արժէքաւոր կեանքի մը յիշատակը ոտնակոխ ըրած էին, քառասուն յիսուն զրուշի չնչին դումարի մը փոխարէն :

ԿՆՈՋ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Կինը հոգեբանական Պրոթէստ մըն է, որ այսօր մէկ կերպարանքի տակ կ'երեւնայ, վաղը ուրիշ կերպարանքի տակ, և այսպէս ամենէն տարօրինակ ու իրար չբռնող վճիռները կ'արդարացնէ:

Եւ սակայն կարելի է շատանալ այս շատ անորոշ ու հետեւաբար հարեւանցի դատաստանով, և կանացի հոգիին ուսումնասիրութեան ընծայած ամէն անակնկալներուն և մեծ պէսպիսութեան մէջտեղ իսկ՝ կարելի է գտնել մէկ քանի նշաններ զորոնք հաստատապէս ամէն կիներն ալ ունին և որոնք ցոյց կուտան կնոջ մտածելու ու գործելու եղանակը ու ընդհմարել կուտան անոր բընաւորութեան մէկ քանի կողմերը:

Յուզումներու մէջ է որ կանացի հոգեբանութիւնը իր ճշմարիտ հանգամանքովը կ'երեւնայ:

Ինչպէս որ ժողովրդի մը խառնուածքը ի յայտ կուգայ ոչ թէ առօրեայ կեանքին միօրինակութեան այլ ընկերական մեծ ոգեւորութեանց ախտաբանական վայրկեաններուն մէջ, անանկ ալ անհասներու դասի մը, սեռի մը ներքին բնաւորութիւնը կը տեսնուի ոչ թէ ամէն օրուան պարզ դէպքերուն, այլ անսովոր երեւոյթներուն մէջ:

Արդ, անժխտելի իրողութիւն է թէ կինը էրիկմարդէն շատ աւելի քիչ յանցանք կը գործէ. (Յրահասայի մէջ, 100 ամբաստանեալի վրայ 14 կին կայ միայն և խալիոյ մէջ 9): Բայց երբոր կինը յանցաւոր է, էրիկմարդէն աւելի անպատկառ, անգութ, բիրտ, ապականեալ է:

Ասոր միացուցէք սա իրողութիւնն ալ թէ կինը էրիկմարդերէն աւելի կը բարձրանայ բարոյական մեծութեան, — որովհետեւ չի կայ առաքելութիւն մը, անձնութիւն մը, գիւցազնութիւն մը որուն մէջ էրիկմարդիկը չգերազանցէ, — և ան ատեն պիտի հասնիք սա եզրակացութեան թէ կանացի հոգեբանութիւնը այնպիսի կատարնե-

րու բարձրութեանց և այնպիսի անդունդներու խորութեանց կը հասնի, որոնց չի կրնար հասնիլ էրիկմարդը:

Ուրեմն, եթէ ներելի է ամբողջական վճիռ մը տալ կնոջ մասին, պէտք է ըսել թէ անոր հոգեբանութիւնը գրեթէ միշտ ծայրայեղութեանց հոգեբանութիւնն է: Միշինը անծանօթ է իրեն թէ՛ լարիին և թէ՛ չարին մէջ: Ծոյլ ու մեղկ էակները, ո՛չ բարի ո՛չ չար, որոնք երբեք պէտք եղածին չափ կամք չունին լաւ գործ մը ընելու համար, ո՛չ ալ պէտք եղածին չափ յանդգնութիւն՝ չար գործ մը ընելու համար, արական սեռին կը վերաբերին մանաւանդ: Կինը, ընդհակառակը, ամբողջ բարի է կամ ամբողջ չար, և նոյն իսկ, երբոր ո՛չ մին և ո՛չ միւսը ըլլալ կը թուի և ինքն ալ ամփոփուած կ'երեւայ այն անորոշութեան մէջ ուր կը գտնուի իր մեծամասնութիւնը, կը բաւէ որ առիթ մը ներկայանայ որպէս զի զինքը արթնցնէ իր առեքելոյթ թմրութեանէն, անմիջապէս մէջտեղ հանէ անոր բնաւորութիւնը որ տարտամ ու չիփթ երանգները չի ճանչնար, և կինը, պարագայներուն համեմատ, հրեշտակ կամ դեւ ըլլայ, ներագութեան մէջ անուելի և զոհողութեան մէջ վսեմ:

Ինչ բանէ՞ կախում ունի կանացի հոգեբանութեան այս տարօրինակ յատկանիշը:

— Այն անձուկ շրջանակէն ուր կը շարժի կնոջ գործունէութիւնը, այն բարոյապէս ու մտաւորապէս նեղ միջավայրէն ուր կ'ապրի անիկա:

Մինչդեռ էրիկմարդը իր զգացումներուն և մտածումներուն շարժման համար առիթ ընդարձակ ասպարէզ մը ունի, կինը՝ արդի ընկերութեան մէջ՝ ընտանիքին շատ սահմանափակ դաշտն ունի միայն: Էրիկ մարդ մը կ'ապրի, կը մաքառի, կը վախճայ, կը յուսայ անձերու շահերէն բոլորովին տարբեր գաղափարներու և իրերու համար: Կինը, ընդհակառակը, իրեն անձնական եղածին համար միայն կ'ապրի և կը մաքառի: Էրիկմարդը իր գործունէութիւնը կը տարածէ, կը սփռէ անազնութեան անհատներու վրայ, կինը զանիկա կը կեդրոնացնէ փոքր թուով անհատներու վրայ, — իր էրիկը (կամ սիրահարը) և իր զաւակները: Ուստի ընական

է որ կանացի գործունէութիւնը նուազ տա-
րածական ըլլալով, աւելի զօրաւոր ըլլայ
թէ՛ բարիքն և թէ՛ չարին համար, և թէ իր
սիրտը հրդեհի փայլատակումներ ու քարայրի
մթութիւններ ունենայ, գործմանքի վսեմ
թափեր, և գերանուրը անգթութեան բիրտ
պայթումներ:

Տեսէ՛ք, մտաւորական աշխարհին մէջ
ճիշդ նոյն երեւոյթը կը տեսնուի ինչ որ պի-
տի տեսնուէր բարոյական աշխարհին մէջ:

Կնոջ միտքը որ, ամբողջութեանը մէջ,
էրիկմարդուն մտքէն շատ վար է, ընդհա-
կառակը կը գերազանցէ զայն և իրօք սուր
ու ճազուկ կ'ըլլայ ինչ ինչ փափուկ զգա-
ցումներու վերլուծման և ընդհանրապէս հո-
գեկան վիճակներու հոգեբանական ըմբռն-
ման մէջ: Միջակ տաղանդի տէր կին մը
մեծ հանճարի տէր մարդէ մը աւելի լաւ և
աւելի խորին կերպով կը կարգայ յաճախ
մարդկային սրտին մէջ: Շոքէնհաւէր շատ
լաւ ըսած է. « Կինը մտաւորական կարճա-
տեսութիւն մը ունի որ իրեն թոյլ կուտայ
մեծ թափանցողութեամբ տեսնել իրեն մօտի
բաները. բայց իր հորիզոնը սահմանափակ
է. ինչ որ հեռաւոր է, իրմէ կը խուսափի: »
Արդ, ինչ է այս կարճատեսութեան պատ-
ճառը: Անշուշտ, միակ պատճառէ մը յա-
ռաջ կուգայ. անձուկ շրջանակի մէջ ապ-
րելով, իր միտքը՝ որ պէտք եղածին չափ
ուժ չունի դատելու համար այն բաները ո-
րոնք զինքը չեն շրջապատեր, սրտնք կը
վերաբերին այն ընդարձակ դաշտերուն ուր
երկեք կանգ չառնէր իր նայուածքը, քնդ-
հակառակը կը նրբանայ և կը մասնագիտա-
նայ իրեն դրացի բաներու դիտողութեան
մէջ, և իր ուղեղային գործունէութիւնը,
ճիշդ անոր համար որ տարածուած չէ, ա-
ւելի զօրաւոր կը դառնայ հոն ուր կանգ
կ'առնէ:

Կանացի հոգեբանութեան հիմնական նը-
շանն է ուրեմն ծայրայեղութիւնը: Ասիկայ
անշուշտ վտանգաւոր է, բայց էապէս հա-
մակերկի: Ծայրայեղ բնաւորութիւնները մեծ
ցաւեր կը պատճառեն, բայց նաեւ մեծ ու-
րախութիւններ. այնչափ աւելի հաճելի կ'ըլ-
լան, որչափ կորովի, բացարձակ բան մը
կայ իրենց մէջ:

Անցնինք ուրիշ կէտերու:

Կիլիոմէ Ֆէրրէրօ ցոյց տուած է թէ կինը
կեանքի մէջ կը կուուի էրիկմարդէն աւելի
վարադ և նուազ ուղղամիտ զէնքերով:
Կինը խորամանկութիւնը, խաբկանքը, ծա-
ծուկ մոլութիւնները նախամեծար կը համա-
րի անկեղծութենէն. ուղիղ և բաց ճամբա-
ներէն:

Այս երեւոյթին պատճառը բոլորովին բը-
նախօսական է: Տկար էակը, — և կինը
տկար է, — պէտք է հարկաւորաբար իրեն
յատուկ միջոցներ գործածէ անդամալուծե-
լու համար զօրաւորին ուժը: Ասոր հա-
մար է որ կանացի հոգեբանութիւնը մեծ
մասամբ կազմուած է քնքրիկներէ:

Իրենց պատրաստած վրիժառութիւնները
երբեք ճակատառ ճակատ ի գործ չեն դրուիր,
այլ մութին մէջ կը դարձնուին: Կը կեղծեն
ու կը խաբեն ո'չ միայն երբոր պզտիկ ու
խորհրդաւոր ցաւեր կը նիւթեն, հապա նոյն
խկ երբոր, ուղղակի թշնամիին դէմ ելլե-
լով, անկեղծութեամբ գործելու և խօսելու
երեւոյթն ունին: Այս վերջին պարագային
մէջ, առաջուրէն ուսումնասիրած են ընե-
լիքնին: Ծշմարտութիւնը ըսելու այնչափ
անխարժ են որ եթէ իրենց դէմ անկեղծ ըլ-
լաս, ինչպէս դիտել կուտայ Պուրժէ, միշտ
զինաթափ կ'ըլլան, որովհետեւ բնաւ չեն
սպասեր ադ բանին:

Մեղքերու մէջ կինը միշտ երկրորդական,
ծածուկ դեր մը կը խաղայ: Էրիկմարդը,
աւելի զօրաւոր և աւելի միամիտ, կը գոր-
ծէ. կինը, աւելի տկար և աւելի նենգա-
միտ, կը շատանայ օգնելով, թելադրելով:
Գիտէ թէ բարոյական մեղսակցութիւնէն զը-
րեթէ երբեք հետք չի մնար, և շատ քիչ
անգամ խղճի խայթ մը կ'ունենայ տեսնե-
լով որ արդարութեան ձեռքը ինկած է՝ միտ
մինակ՝ այն մարդը զոր ինքն իսկ մեղսա-
գործութեան մղած էր:

* *

Բայց ատկից զատ ուրիշ պատճառներ
ալ կան: Առաջինը, ինչպէս ըսած է Զոլա,
իր վրայ խօսեցնել տալու, հանրային ու-
շադրութիւնը գրաւելու պէտքն է: Երկրոր-
դը՝ ատելութիւնն է: Նոյն իսկ պարկեշտ
կիները (պարկեշտ՝ եղեռնական տեսակէտով)

* *

երբոր ու է պատճառաւ մը կը լքուին կամ կը լքանեն իրենց սիրահարը, անտարբեր չեն ըլլար անոր նկատմամբ. մոքով կը հետեւին անոր, և, առիթը ներկայացածին պէս, կը զգացնեն անոնց թէ տակաւին իրենք կենդանի են: Երբոր պատուաւոր մարդու մը հետ յարաբերութիւննիւ կը խզէք, կրնաք վստահ ըլլալ թէ այդ պատուաւոր մարդը՝ կոնակը ձեզի դարձնելուն պէս՝ ա'լ չպիտի փնտռէ ձեզի չարիք ընել: Ընդհակառակը, եթէ կնոջ մը հետ խզէք, ապահով չէք թէ հանգիստ պիտի ձգէ ձեզի. կրնաք միշտ վախնալ որ չ'ըստէ ձեզի:

Եւ հոս ալ ծայրայեղութեանց հոգեբանութիւնն է որ ի յայտ կուգայ կանացի հոգիին մէջ:

Վտանգաւոր հոգեբանութիւն, և որ սակայն, փոխանակ հեռացնելու, կը յանկուցանէ:

ԼԻՅՆ

ԿԻՆ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉ

Եւրոպան, որ զարգացումի, ուսման և քաղաքակրթութեան օրրանն է եղած դարերէ ի վեր, շուրջ կիսադարեան ժամանակամիջոցի մը մէջ իգական սեռէ արհեստաւորներու ալ պէտքն զգալի ըլլալը ազդարարած էր թերթերու պարբերականներովը. « Թէ ինչո՞ւ կինն ալ չի վայելէ ձիրքերը ու յատկութիւնները գործադրելու առանձնաշնորհումը իր հակասելին պէս, քանի որ բնութիւնը անոր ալ չնորհած է համահաւասար չափով միտք, սիրտ և հանճար... »:

Ու անկէ ետք երեւցան կին գրողներ, կին բժիշկներ և կին փաստաբաններ, որոնք էն վերջը առեւտրական հրապարակին ալ նետուեցան: Կին վաճառականներ, կին արհեստաւորներ ու մանաւանդ արդի տարիներու մէջ կին գրագիրներ:

Փափուկ սեռին համար գաղտնիք եղող առէն խնդիրները պարզուած, խոչնդոտները հարթուած ու դժուարութիւնները դիւրացած կը համարուէին այդպէսով:

Անոնց միտքը որ մեր կարծիքովը « սահմանափակ » բան մը կը նկատէինք, ընդհանրապէս աշխատութեան չափաւորումով ու

պատշաճութեամբ իրենց առօրեայ զբաղումին, ընդունակութիւնն մը ու անվատ ջանք մը ցոյց տուաւ:

Գաւառի մը մէջ Մատամ Ռօզա հագիւ 5 ամիսէ ի վեր ամուսնացած, լուսանկարչական գործիք մը գնեց վերջերս իբր ժամանց, այդ արհեստին հմտանալու համար:

Երբ ու է մէկու մը կենդանագիրը առնելու ձեռնարկէ, տիկինն է որ կը լարէ մեքենան: Քաշուած մուկ պահարանի մը մէջ տիկինն է որ « պանեօն » կընէ և վերջն ալ « ռըթուշ » ը իր փափուկ ձեռքերովը:

Բնական է որ այդ միջոցը շատ ու շատ բաներ յուսալ կ'ուսայ իրեն, ամէն այրերը որ կ'ուզան հոն՝ իրենց լուսանկարը հանել տալու, հաւանականօրէն ուրախ պիտի ըլլան, որովհետեւ կին մըն է որ կը լարէ մեքենան ու պատկերները՝ բոլորն ալ յաջողած պիտի ըլլան անշուշտ:

Հակադարձաբար՝ եթէ կին մը ըլլայ եկողը իր լուսանկարը հանել տալու, հաւատացէք շատ ողբելի դիմագիծ մը պիտի նշկարուի ապակիին վրայ, որովհետեւ նախանձը յուզմունքով պիտի լեցնէ անոր սիրտը:

« Կինի, նախանձի մարմնացումներ, պըրասիութեան զոհեր, դուք ատելաժառ հոգիներ էք իրարու հանդէպ » ըսելու երբեք չի պիտի վարանիմ:

ԲԵՐԱԶԻՆ

ՏԽՐՈՒՆԻ

Խորին ցաւով կը ծանուցանենք թէ Օր. Հերանոյշ Յակոբ-Արշակ, դուստր հանգուցեալ Յակոբ Արշակ էֆէնտիի, կնքեց իր մահկանացուն ծաղիկ հասակին մէջ և յուղարկաւորութիւնը կատարուելով Պէշիկթաշի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ, մարմինը ամփոփուեցաւ Շիշլիի Ազգ. գերեզմանատունը:

Վաղամեռիկ Օրիորդը փայլուն ապագայ մը խոստացող աղջիկ մըն էր, որ իր մատաղ հասակէն իսկ, ցոյց տալ սկսած էր տաղանդաւոր մտքի մը յատկանիշերը:

Խմբագրութիւնս իր անկեղծ ցաւակցութիւնները կ'ուղղէ հանգուցեալին վշտահար մօրն ու քոյրերուն, իրենց կրած այս դառն կորուստին առթիւ:

ԿԻՐԱԿԻԻ ՔՕՆՍԵՌԸ

ՆՕԹԵՐ ՈՒ ԲՕԹԵՐ

A la bonheur !

Ամիսներէ, օրերէ, ժամերէ առաջ սպասուած Ս. Փրկչի Հիւանդանոցին ի նպաստ Նուագահանդէսն ալ իւր coursը անցուց կիրակի Բերա Բըթի-Շանի ձմեռնային թատրոնին մէջ, կատարեալ պատրաստութեամբ և կատարելագոյն յաջողութեամբ :

Ամէն անոնք, որոնք ոչ թէ օր, այլ, ամիս առաջ մտադրած էին իրենց attirant ներկայութեամբը պատուել ցերեկոյթը, քաջ գիտեմ թէ — գեղեցիկ սեւին համար խօսելով — շաբաթ իրինկուն à la coque հաւկիթով մը բաւականացան և ժամը երկուքին քնացան, առաջինը քօռսէնին վերջին աստիճան սեղմելու, իսկ երկրորդը դէմքերնուն թարմութիւն և աչքերնուն փայլ մը տալու համար :

Իսկ գալով տգեղ սեւին (°) անոնք ալ իրենց կարգին գիտէք ինչ ըրին . . . շաբաթուան թուաշին կիրակիի ձգեցին . . . բուռն և վրան ներս մտնելու համար սրահէն :

Հակառակ շաբաթ գիշերուան չոր ցուրտին, կիրակի առաւօտ ընտելութիւնն ալ իր նպաստը հասցուց փոխանակ Հիւանդանոցին պատասխարեալներուն, քօնսեփին պատրաստիչներուն :

Ձինջ երկինք մը կապոյտ՝ կոյսի մը աչուկներուն պէս, ոտկի արև գաղջ մթնոլորտ, և կարծեմ քօնսեփի երթալու համար ասկէ աւելի sur commande օր մը չէր կրնար ըլլալ : Ուստի en route :

Առաւօտուն կանուխ մեր տիկիններն ու օրիորդները իրենց toilette matinaleով գործի վրայ են : Բօսթիւնի կորոշին, գըլխարկներ կը տատանին ձեռքերու վրայ, բէլլըններ խիստ քննութենէ մը կանցուն, նախակրթարանի վարժապետացի մը պէս, ու դեռ որոշում մը չեն կրնար տալ : Հաստ հագուելու է թէ բարակ . . . : Բէլլընին առնկու է թէ պոռա, լաթիք թէ պօթ, ձը-

մեռումն գլխարկ թէ ամառումն, առանց գիտնալու թէ ճիշդ եղանակին demie-saison հագուածը կայ և որ զայն չունենալուն է որ քրտինք կը թափեն, քուրջի կտորուանքներու առջև ժամերով :

Մինչ այս մինչ այն, երկինք իր գորշ վռալիքը կզգենու քօնսեփի ունիներէն առաջ, այնպէս որ առաւօտեան զուարթ առիւծ իր ճաքօն կսկսի մերթ երեւնալով ու մերթ ծածկուելով տեղատարափ անձրեւնեւրու սարսուռով ծանրաբեռնած ամպերու ետին :

Ահա սրտմտութիւնը կանչէ, ամէն կին հաւ կը կտրի, վեր նայելով, դէմքերը կը թթուին, ամէնուն աչքին մէջ բարկութեան արցունքի կաթիլներ կը յօրինուին, մէկը լաստիկին հինութիւնը կը մտածէ, միւսը բէլլընին գունատութիւնը, ուրիշ մը հովանոց չունի, անդիւրը ձմեռումն հագուածին տէրաւ կուլայ, որմէկը գլխարկին օդին անյարմար ըլլալը կողբայ, վերջապէս իրենց այս բոլոր սրտմտութիւն մէջ, երկինք կը պոռթկայ ու իրենցմէ առաջ ամպերը կսկըսին շօթել շօթել արտասուել . . . կակուղ շաքարը ջուրը ձգելով :

Բու բարեբեր անձրեւնեւրուդ օրը՝ գտար Աստուած . . . :

Ու ալ ձայները կը բարձրանան, դիտողութիւնները կսկսին անձրեւին հետ տեղալ, մինչ ժամերը կը սահին :

— Ինչ ըլլայ նէ ըլլայ սլիտի նետուիւմ . . . :

— Բէսթէնքէլէ եաղմիշ ըլլայ նէ պէճէրուիմ պիտի . . . :

— Տակէս հասարկէկ կը հագնիմ, չեմ մըսիր, ինչ ըսիր . . . :

— Տուտուիս լաստիքները իմիններէս նոր է, ատոնց համար տունը մնալու չեմ եա . . . :

— Բրոջս չէմ չիէն, ներոջս ալ քիւրքը կառնեմ լըմնցաւ գնաց . . . :

— Բալթօիս տակէն իրէքլի պլուգաս բէք աղուոր կրնամ հագնիլ, հոն երթալու պէս կռնակէս կը նետեմ . . . :

— Շարխայիս վէլօն քիչ մը ծակ է ամա, աս անձրեւին ո՞վ որի . . . :

— Սա նայէ, ամառուան շարխաս բէք խըզը պիտի երթար, հիմա թնչ խալթ պիտի ուտեմ, եռմուռնախ հինովս . . . :

— Առջին տիւզ քօռսէս չեմ կրնար դըներ աս ֆիստանիս տակէն, չէնէ բէք քօռլայի պէս պիտի երեւայի . . . :

— Պալանթ օղերդ տուր քիչ մը մամա, չեմ ձգեր, վրտաները բարակ թիրէով կը սխմնք . . . :

— Բիչիկ մը հաց քըթըռ ըրէտէ բեր քուրուկս, ակռաներս չփեմ . . . :

— Տա պօթերուս քիչ մը զէթին եաղի քսեցէք քի ճերմակները սեւնայ, բէք կռող կերեւայ կոր . . . :

— Պիլէթը աղէկ տեղ դիր քի դուռը խախք չըլանք . . . :

— Նա', չօճուխին էմպիլը պռոյին վըրայի աշիւր դրեր եմ, քանի թղկայ նէ պերանը տուէք, ան ծրփ ծրփ կը քաշէ . . . :

— Մասնինիս էլտիլէնիս վրայէն դնեմ աճապ . . . անքի ունիմ նէ, տասնկ օրին ինչու չի դնեմ սանքի . . . :

Ու նմանօրինակ խօսակցութիւններ էին որոնք կանցնէին ամէն անոնց տուները, որոնք զսպանակի մը պէս լարուած կսպասէին որոշեալ ժամուն երթալ պատժուելու համար ԶՈՐՍ ժամ արթոններու վրայ :

* *

Ժամը ցերեկուան 6 1/2-ն էր (Ը. Թ. չի մոռնամ ըսել) երբ հասայ Բըթի Շանի թատրոնը: Անձրեւը կարծես նախանձելով կանացի չքնաղ թուալէթին կը տեղայ անդադրում, ու կառապանները իրենց բարձրագիւր արթունակներու վրայ մուկ կտրած, անխիղճ հարուածներ կիջեցնեն ձիերուն, որոնք քալելու կարողութիւն չունին. խեղճերը :

Յըչիթ . . . տիկին մը կանցնի ներս, չըռսիս . . . կառք մը կը կենայ դրանն առջև, չչչըճ . . . միւսիւ մը, թաց հովանոցը գոցելով ներս կը սուրայ, և այսպէս շարունակաբար, բոլոր ոսկինոց տոմսակը ձեռքը քօնսէռնները հե ի հե ներս կը վազեն, դուրսը տեղացող անձրեւէն աւելի (ըստ մեր բարի սովորութեան) տեղ բռնելու համար :

Ի մէջ այլոց, փոքրագատուութիւնս ալ իր պատկառելի entrées կրնէ, ու երբ տոմսակն եասախճիին կը ներկայացնեմ.

— Մէկ հա'տ . . . կըսէ, զարմացու մէն յօնքերը գդակին տակ տանելով :

— Հապա քանի' հատ պիտի ըլլար, կը պատասխանեմ պաղ արեամբ, մինչ հովանոցիս չըռը չըռը կաթկթող անձրեւի կաթիլները մօտս կեցող տիկնոջ մը ֆուռֆուռ բէշը կոռոզեն . . . :

— Լաւ, անցէք կըսէ չնորհ . . . ալի չեչտոլ մը ու մենք այսինքն ես ու կէսս ներս կը մտնենք, քօնսէռն աւելի' անձրեւէն պատսպարուելու ուրախութեամբ :

Ձեմ գիտեր թէ ինչո՞ւ համար հանրակառքերը, չոգենաները եւն. պզտիկ աղաքները, ու քօնսէռն ալ տամաները առ ոչինչ կը գըրեն ու տոմսակ չեն կտրիր, չեն ուզեր, չեն պահանջիր ատոնց համար : Այս կէտը քիչ մը քիչ պատուոյ դպչելիք բան չէ, բայց նկատողութեան չառնուիր մեր գեղեցիկ սեռէն . . . : Անցնինք :

Ինչպէս ըսի, Հայու յատկանշական սովորութեամբ, ժամը վեց ու կէսին ներս կը մտնենք, երբ մենէ աւելի իշկիւզար երկսեռ անհիշճիները արդէն դրաւած են արթոնները բեմին մօտ, մինչ օթեակները մեռելի աչքի պէս բաց ու պաղ կը կենան, սպասելով իրենց կարգին ընդունիլ մեր համայնքին Ազնուաշուքները :

Այս տարուան Կարգադիր Մասնախմբին մէջ կերեւայ թէ եմփէնիտոն մը ըլլալու է, քանի որ 400 հոգինոց բառ քեռը, 8—900 հոգի սեղմեցնելու գիւտը յղացուած էր :

Ասիկայ խելացի գիւտ մըն է պէտք է ըսել, և կանխամտածութեամբ եղած, քանի որ մենք « փարայ տուեր ենք, աճին հանենք » ի գաղափարով մեր քոյրերը, քենիները, թէյզէները հետ առնելէ զատ, դրացիներն ալ կը հրաւիրենք, հետ կառնենք, այնպէս որ հարիւր տոմսակով ինը հարիւր արթոն կը գրաւենք . . . : Ձէ' :

Վարկեանները կը սահին, բազմութիւնը տակաւ կը խռնուի, այնպէս որ քլաքաներուն պոթօնիէսին մէկ մէկ ծաղկեփնջիկով չիք հիւրնկալները հազիւ կը բաւեն ու կը հասնին ամէն հակափորի տիտիկցու արթոն մը ցոյց տալու :

— Այս կողմէն տրեւել . . .
 — Հաճեցէք քիչ մը տեղ տալ . . .
 — Դուք աւելի անդին , խորը , օթեակին տակ անցէք . . .
 — Ներողութիւն , այս կողմէն . . .
 — Բաղտօն , բաղ իսի մատմաղէլ . . .
 Ու նմանօրինակ քօմպլիմաններով կը մեծարեն յաջորդաբար հասնողները , ու այս պահուն մօտէս անցնող ընտանիքի մը խօսակցութիւնը ծիծաղաւ կը շարժէ :
 — Հո՛ս տրեւել , հրամանեցէք . . .
 — Տէր ողորմեայ , մառքալը չէ եւ , աչկս չի զօրեր , առջեւ պիտի աննիմ . . .
 — Դրաւումը է տրեւել , հոս աւելի հանգիստ կրնէք . . .
 — Ծօ եւթրում , թումաճան աղան ալ օսկի մը տուաւ . . . անանկ պէտէ՛հալա ներս մանող սոյէն չենք . . .
 — Իրաւունք ունիք տրեւել , բայց . . .
 — Աղջիկանս խաթիւն համար եկայ աս արդէվին , վայ գլխուդ , չէնէ ինչո՞ւ պէտք , պաղը ճիշդս անցաւ . . .
 — Կաղաչեմ տրեւել , ճանապարհ , ուրիշ եկողներ կան . . .
 — Աղէկ քի Տէրտէրներէն այս ճանապարհ ալ սորվեր էք . . . հէլէ սըտեղը նըստիմ տէ չըլլայ նէ թումաճան աղային կը սեմ հինգնոց մը կուտայ առաջք կանցնիմ . . .
 Ու մինչ տրեւելը իր զառանցանքը կը շարունակէր , հիւրընկալ երիտասարդը խընդուկը զսպելով բոսնուեցաւ մօտէն :
 Ժամը եօթն է ալ , ամբողջ Բըքի Շան կը հեծէ խուռն բազմութիւնէն ու վերջը չիզար նորեկներուն , հեռաւոր արուարձաններէ հասնողներուն , որոնք արեւն քրտինքը մըտած կուգան կը կծկուին կէս կանգուն քանի աթոռի մը վրայ . . . ան ալ ետեւները Բիչ մը առաջուան պարապ օթեակները հիմա զարգարումն են Բերայի ծաղիկներով , ամէնքն ալ մէկ ընտանիքի պէս իրարու ծանօթ , որոնք կսկսին գլխու առիսթօրաք բարեւներ փոխանակել , մի և նոյն ատեն զիտելով իրարու հակառակ խըզ խըզի վրայ թուալէթները :
 Թող ներուի ինձ խոստովանիլ հոս թէ այդ հայ-լայֆ ընտանիքներէն հազիւ 10 %ը միւլիթ լսելու համար եկած էր , մնացեալ մեծամասնութիւնը — անոնք է հոս կրկնելու —

ի մեջ այլոց կը նշմարուէին փառասիրութեամբ :
 Հակառակ եւրոպականացեալ իմիթասիօնին , յայտադրին մէջ գրումս ազգական ժամը 7 , կէս մ'ալ անցուց : Բայց մենք ատանկ պզտիկ բաներու վարժումս ըլլալով . . . passons :
 Բուն նուագահանդէսին վրայ խօսելէ առաջ , հասկցնելու համար թէ՛ մենք որչափ կը հասկնանք միւլիթէն , բացասքինք օրինակով մը :
 Մօտս նստող ընտանիք մը սա դիտողութիւնը կընէր , ըսածին վստահ չեշտով մը :
 — Դիտնալս բոսվասըզ կը չալեն կոր , զէրէ աչուրնին նօթային թուլթէն ասդին չեն առներ կոր . . .
 — Սուս եղիր ֆաւղին եմ . . . նայինք հասկցող կա՛յ . . .
 — Չընայիս քէմանին վախիթ վախիթ կը կենայ կոր , գիտնալըս ատ կսորը աղէկ չիյաէ տէ փախցունք կընէ կոր . . .
 — Բիանօն չը նային , ծանը պիլէ չեւար կոր , Շնորիկը ըլլալու էր քի կիւմպիւր կիւմպիւր էօթտիւրմիշ ընէր . . . :
 Ինչպէս տեսաք , դիտողութիւնները սկըսած էին ծայր տալ , երբ Սէլվէլիի պէս , Պառուսի պէս վարպետներ թոթօն կը զարնէին ամենայն ճշդութեամբ և կատարեալ ներդաշնակութեամբ :
 Շիտակը եթէ կենցաղագիտութիւնս ներս ինձ , պիտի համարձակէի պատասխանել իրենց , ըսելով .
 — Ներեցէք տրեւել , դուք որ այդչափ լաւ գիտէք ալ կը հօսկնաք , հարուր տիրէմ եաթուախին քանի՞ զլոխ սոխ պէտք է չարթթել . . . :
 Բոսկումին առաջին մասին մէջ նշանակում հաճախող պէտպիսութիւնները յաջորդաբար կանցնէին յաջողապէս , երբ հայ-լայֆ վիզիթները սկսան օթեակէ օթեակ , կարծես թէ իրենց մասնաւոր ընդունելութեան օրը ըլլար : Այցելուներու մէջ բան գիտցող , այսինքն , թատրոնի մէջ լօժէ լօժ այցելութիւնը հարկ անհրաժեշտ ըլլալը a fond զգացողներէն զատ կային անանկներ որոնք , հոս հոն , անոր ասոր օթեակը կ'այցելէին լոկ վարը բառ , քեռը նստողներուն ճախա ընելու

համար թէ « ես ասանկ ընտանիքներու հետ կը տեսնուիմ . . . » : Զրտեաններ . . . :

Օթեակներու մէջ անցած խօսակցութեանէն նմոյշներ :

— Օ' . . . ինչպէս էք . . . այս տարուան բազմութիւնը քիչ մը աւելի չէ՞ք գըտնէր տիկին . . . :

— Այո' . . . բայց օդը . . . սարսափելի բան , թէեւ կառքով եկանք . . . :

— Ինչպէս գտաք երգչուհին , տիկին . . . :

— Տարօք չէ՞ր քիչ մը . . . :

— Այո' , բայց ձայնը . . . մանաւանդ ամուսինը . . . :

— Սա դիմացի օթեակը նստողը այնինչին կինը չէ՞ . . . ինտո՞ր ալ տարուեր է . . . :

— Այո' . . . տիկին , կարծեմ չէ՞ք տեսնուիր . . . :

— Ո՛չ . . . :

Ուրիշ օթեակ մը :

— Երէկ գիշեր խրջանէթ մինչեւ չորս ըսպասեցինք . . . :

— Կը ներէք տիկին , անակնկալ այցելութիւն մը ունեցայ . . . ինչպէ՞ս , դուք քառէն կազմեցի՞ք . . . :

— Գիտէք որ առանց ձեզի . . . :

— Ֆլաթէ կընէք տիկին . . . այս իրինկուն կը ջանամ դալ . . . :

— Քեզի բան մը ըսեմ . . . սիրտս կը նեղանայ կոր . . . քանի՞ն կը վերջանայ . . . :

— Պր. Հէկէն անգամ մ'ալ չէ՞ք լսեր տիկին . . . :

— Մինակ ան , մէջ մըն ալ , ջութակ զարնող Հայ երիտասարդը , Կիւտէնեան կըսեն կոր ինչ . . . միւսները այնքան անորոժելի չեն երեւար կոր . . . :

— Այո' տիկին , շատ վարժ մասնէր ունին երկուքն ալ , կը շնորհաւորեմ ճաշակնիդ . . . :

Ուրիշ սէլիւլի մը մէջ :

— Գլխարկդ շտկէ . . . ըռաբութալը ֆուեր է . . . :

— Ո՛ւֆ . . . մամաս , ֆլէշս չի բռներ կոր . . . :

— Սանկ քովս եկու պէլլիսիդ մը տէ ֆուռքէթայով մը բռնել տամ . . . :

— Զգէ հիմա սա կաորը մտիկ ընենք . . . :

— Գունա կուգայ կոր , գիտնայինէ չէի ի դար , հիշ խոչ պան մը չիգայ . . . :

— Տէր ողորմեայ ըսէ . . . :

— Սա վարը նստող , աչքն պլուզալըն ճանչցա՞ր . . . , շախ տէյի մի նայիր , կամաց մը , պէլլիսիդ . . . :

— Ո՛վ է քի մամաս . . . :

— Զորս անգամ նշանուեցաւ , չորսն ալ ետ եղաւ . . . սրնըրը է եղեր զավալըն . . . :

— Պէլլի է զաթը , չի նայիս պիր տիւզ քիթը պերանը կը խաղցունէ կոր . . . :

— Նահա մայրիկ , Կիւտէնեանը . . . :

— Շնորհքով տղայ է . . . :

Ոսկիներու մէջ պլինձ գաղափար . . . :

Ահա այս միջոցին է որ երիտասարդ արուեստագէտ Կիւտէնեանի կը պատահի անակընկալ մի ե նոյն ատեն ագեղ անցք մը :

Սառազաքի էն հիասքանչ կտորին , Զիկացնէռփայլընը զարկած ատեն , առաջին բառիկին երբ սուտփնով կը զարնէր , աւարտելուն , երբ աղան կեցաւ սուտփնը հանելու , վարէն , միւզիքէ հասկցողներ սկսան ջերմապէս ծափահարել , կարծելով թէ վերջացած էր կտորը , մինչդեռ բուն լսելի է էն դժուար մասը կը մնար անդին , զոր շատ լաւ ըրաւ չիտակը չի զարնելով , մասները պարապ աւելը պիտի յոգնէին . . . քանի որ չի հասկցան :

Պաւլօ Կիւտէնեան , tel maître tel valet, մեզի ասանկ պէտք է . . . պաւլօ :

Մասնաւորելով մեր քրոնիկը , այդ օրուան արուեստագէտներուն վրայ , կրնանք ըսել թէ Պր. Հէկէ մեծ փայլ մը տուաւ հանդէսին , ու կրնամ ըսել թէ քօսթիւմ բայեփօն հագնողէն մինչեւ ճերմակ բուրդ չորապ հագնողները ափ ի բերան մնացին ի լուր Ֆանթփիին ու Ուաբսօտիին , զորս յաջողապէս ածեց մեծ վարպետը , որոտընդոստ ծափերու մէջ :

Յընտըղիւանի սևեքաքից իր ձայնէն անուշ ըլլալուն համար լաւ ընդունելութիւն մը գտաւ . անցեալ տարի իր ձայնը աւելի յստակ աւելի որոշ եւ դեղեցիկ էր , չենք գիտեր թէ , ինչպէս ամէն հայ երիտասարդ , ինքն ալ Եւրոպայէն դարձին Գաւալուակի ջերմ սիրահար մը եղաւ . . . :

Ամէն պարագայի մէջ, ուրախ ենք յայտարարելու թէ, այս տարի թէ՛ կարգապահութեան և թէ՛ հասոյթի կրկնակ տեսակէտներով, գերազանց առաւելութիւն նըշմարուեցաւ բազմաթիւ նախորդ տարիներուն. յուսալից ենք թէ յաջորդ Միջին քին պատիւը պիտի ունենանք վայելել կրկնապէս փայլուն ցերեկոյթ մը, չնորհիւ տարուէ տարի աւելի նախանձախնդիր մասնախմբերու, որոնց ճաշակէն կախում ունի ամէն ինչ:

Նօթ մ'ալ և վերջացնենք:

Մէկ քանի բան պիտի խնդրեմ ժողովուրդէն, որոնց գործադրութիւնը անհրաժեշտ է նմանօրինակ հանդէսներու մէջ:

1. Պիտի խնդրեմ որ կիները այդ օրուան ցերեկուան ճաշին, սոխ, սըխտոր չուտեն, յաջորդական «կըւթ» երէն գոյացած կազը քովիններնուն քիթին չկրթալու համար:

2. Շատ երսթոէ չի քսուին, ուրիշներու ջղային դրութիւնը չի խանգարելու համար, բան մը որ քնաբեր յատկութիւն ունի:

3. Գէթ այդ օրին բացառութիւն ըլլալով բեշերնուն տակէն գէր երեւնալու համար խալցալը չի դնեն, քանի որ տարուէ տարի Պատ. Մանախումը, տեղ վասարկելու համար աթուները իրարու գիրկ դնելու գաղափարը ունի:

ԼԻԼԱ

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

Գոնեա, Էրեկլի և չընկալները ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ բաժանորդ. գրուիլ ուզողները պէտք է գիմեն մեր գործակալ ՄՐԲԱՏ ԷՖ. ՕՔՔԱՃԵԱՆԻ:

ՅԱԶՈՐԴ ԹԻԻՈՎ

ԹՈԹՈՎԻԿ

ԵՒ ԿԱՎՌՕՇ

ՅԹՅԱՏԱԿՍ

Առ Գ. Ս.

Կես գիշեր եր, սեմեակիս մէջ առանձին, խորհրդաւոր լուսեան մը մէջ անճառ, Մոմին բեկբեկ ցոլեւուն ճակ լուսավառ. Կը խորհէի քե՛ կեանքս պատրանք մըն է սին:

Թե՛ այս կեանքիս խօլ դարձաւորիկ վայելին Յաջորդելով ցուրս մեռւ մը քանճամաճ, Այսօր կամ վաղ կրնայ յանգիլ «ոչինչ» ին, Իր անուշներն անգամ աւաղ դեռ չ'ապրած:

Այն ասեմ քող ուրիշները չկարդան Մրթի կեանքիս բեկորները անկեղան. Փողվե՛ զանոնք, շինե սին փունջ մ'անոնցմով:

Ու զայն պահէ իբր յիշատակ հոգեքով, Ուրեղ քնառս պիտի երգէ յաւեհ քեզ, Անհուն սիրոյ մ'սառապանքներն սրահեզ...:

Նիկոմի իս

ԲԱՆՏ ԱՇՈՏ

Ա Ջ Դ

ԳՈՀԱՐԾԱՏԵՆԻԿ հայ տղոց, որ կը պարունակէ բարոյական պեղեցիկ պատմութիւններ, նկարագրութիւններ և տոնային սովորութիւններ, պարեր ու խաղեր:

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ տղոց տարիքին յարմարեղած միակ դիւրուսոյց քերականութիւնն է պատկերներու վրայ սովորեցնող:

Գին Ա. մասին 50 փարա, Բ. մասին 100 իսկ Գ մասին 4 դրուշ:

Կեդրոնատեղին է ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ:

Մէքճան փողոց թիւ 57

ՕՐՀՆԱԾ. ԱՍ ԶԵՂԱԻ

Յե՛ս կենակցելէ ճիշդ ասոր ասի ,
 Քիրիէ Բանսոյ , Բոֆոնա Մարի ,
 Աղօթքներէ վերջ ջերմ , պաղասագին ,
 Հասան հազիւ հազ բուն նպաստակին ,
 Մանչուկ մ'ունեցան . . . : Զաւա՛յ ալ ըսես ,
 Թո՛ղ ասանկ ըլլար . . . : Տըղայ չե՛ . . . բըղե՛զ :
 Շնորհած աչքեր , հոգած մէկ մարմին ,
 Սեխաձեւ գլուխ՝ պարծա՛նք իւր զարմին !
 Բայց ի՛նչ հոգ տան երեքդ , սրկար ,
 Ծնողաց խիճողին չափ սահման չը կ'ար :
 Հայրն հաճիւ չըբաւ ա՛լ երկար բարակ ,
 Իր այս մէկ հասիկ զակի՛ն երկնառափ՝
 Կնունքին համար սարեց մեծ հանդես ,
 Բայց զգուշութիւնն ալ չըբաւ անեստ :
 Զմրան օր մըն եր , օդըն եր ցրտին ,
 Երկիւղ մը մտաւ ծնողաց սրտին :
 (Կա՛յ ի՛նչ գերագոյն Բան զակի մը սեր .)
 Կրնար ըլլալ որ մանուկը մըսէր
 Երբ զար մկրտման պահն հանդիսաւո՛ :
 Ուսի , սրնեյւոյ՝ հայրիկն ըսաւ որ
 Տա՛մ մընողորսին աղէկ փոյ՛ջ տանին
 Եւ ջեռուցանեն ջուրն աւազանին :
 Ա՛լ մէկիկ մէկիկ գալով այցելու
 Դիտէին ուժիւ տրանցողին
 Եւ անոր դեմքին վըրայ . . . երկնային ,
 Հօրն խաթերն համար կը հիանային :
 Երբ եկան տեսնեն ու խօսիլանդին (*) ,
 Ան փութաց զանոնք ալ տանիլ անդին ,
 Խոսիլ պատուիրեց որ ջուրն ստացունեն .
 Շուտ ցուրտ մը կ'ընէր տեղացող ձիւնէն :
 « Հո՛ւ մ'ընէր » . . . ըսաւ տեսնող խորան
 Եւ սկսաւ ի վոյ՛ն հանդես : Թաքալման
 Պահուն մերկացուած տղան կը տեսնէր ,
 Դողար , զողողո՛ւն մարմինը սրկար
 Ուր չըկար , աւա՛ղ , հետքն իսկ մըսի :
 « Ամա՛ն » Տէր պապա , վախճամ կը մըսի .
 Զայնեց մայրն յուզուած , իսկ այրն՝ անյապաղ .
 « Հայր սուրբ , լա՛ւ միտ դիւր , ջուրը չըլլայ պաղ »
 Տեսնող , նեղսիրտ , թեւերը սոթթեց ,
 Տղան առաւ , իսկոյն ջուրին մէջ խոթեց . . . :
 « Ա՛ . . . » ըրաւ մանուկն . . . : Նստա՛ն գոհութեան ,
 Կապան սց լուծման , մեղաց բողբոջեան ? ?
 Զիյնմա՛ն : Բայց , նորէն ան երբ զար ի սես

(*) Փառլի կամ խօսիլանդի՝ տրանցող :

Խառած կամքը. ան երբ զար Բարիսես !
 Պաղ ըլլալու չէր ջուրն , հօրը պատուէր ,
 Ըսելիք չըկար , ըսա՛ն էին պատուէր . . . :
 Տեսնողն՝ որ շուտիւ չէր գիտէր երբեք
 « Օ՛ հնամ , աս չեղաւ ուրիշ մը բերեմ »
 Ըսաւ , եւ փեշերն ժողկելով , անհոգ ,
 Բազմոցին անկիւնն նստեցաւ փառօք :

HIRONDELLA

ԶՈՒԱՐԹ ԺԱՄԵՐ

Ամէն մարդ գիտէ թէ Սպանիացի աղ-
 նուակները իրենց անունին չուրջ շատ մըն
 ալ Լակաւնուներ ունին , ու երբ իրենց հարց-
 նելու ըլլաւ թէ ի՛նչ է անունդ , ոչ միայն
 չեն քաշուիր երկար բարակ թուելու այդ
 տխուրանքներու շարքը այլ և մեծ պարծեն-
 կոտութիւնով ու կատարեալ պաշարիւնու
 թիւնով կը կրկնեն զանոնք :

Դիտելու մը ուշ առնին այս կարգի աղ-
 նուակն մը ստիպուած ըլլալով գիւղի մը
 մէջ մնալ , կերթայ ափ կառնէ պանդուկի
 մը դուռը , որուն տէրը ժամանակը ուշ ըլ-
 լալուն դռները գոցած ու պոռկած էր : Եւ
 որովհետեւ պանդուկին դուռը յամառօքն կը
 զարնուէր , խեղճ մարդը անկողնէն ելնելով
 պատուհան մը կը բանայ ու անկէ կը հարցնէ .

— Ո՛ւ էք , ի՛նչ կուզէք այս առնին .

Աղնուակները բերանը բանալով .

— Տօն Ժուան Բէդէթ , Հէրմանոս Բիւ-
 տերիքս՝ Տէրպանո , Դօնթ տի Լամաֆրա ,
 Գալայիէ Սաթիակուայ Տէրպանթօր . . . :

Պանդուկապետը այս անհամարում շարքը
 մտիկ ընելէ ետք .

— Ներեցէք Պարո՛ն , կըսէ , պանդուկիս
 մէջ այդչափ մարդու տեղ չունիմ .

Ու պատուհանը գոցելով նորէն անկողին
 կը մտնէ :

Դիւղացիի աղջիկ մը իբրեւ սպասուհի
 քաղաքացիի մը բնակարանը կը տարուի :
 Տան տիրուհին աղջիկը վերէն վար չափելէ
 ետքը անոր նիհար ու տկարակազմ վիճակը
 տեսնելով կըսէ ,

— Դուն գործիս չես դար , աղջիկ , ո՛ .

րովհետեւ տկար ու նիհար ես և չես կրնար երեք անշարժան զաւակներս հոգալ :

— Իմ կազմիս ի՞նչ կը նայիք տիկին , կը պատասխանէ գեղացին , ես կրնամ անոնց երկու պատիկն ալ պէտք եղածին պէս խնամել :

— Ի՞նչպէս կրնաս ապահովցնել ինձի :

— Վստահ եղէք տիկին, ես մեր գիւղին մէջ սագերու անագին հօտ մը կը վարէի ու բնաւ դժգոհութեան առիթ չէի տար , ձեր երեք հատիկն ալ կրնամ հոգալ :

• • •

Յիսուսը անցուկ կրն մը վկայութեան կը կանչուի Եւրոպական դատարանի մը առջեւ : Յայտնի է թէ ամէն դատարանի մէջ ձեւակերպութիւնները մի և նոյն են՝ երգումի մասին , այսինքն թէ ներկայացող վկան նախ կ'երգուընցուի ու հաքը կը հարցաքննուի իր անունին , մականունին , տարիքին եւ ինչ ինչ վրայ : Եւ սակայն դատաւորը որ կերելի թէ — ինձի պէս — քիչ մը աւելի ուսումնասիրած էր կիներու միտքի զաղտնապահութիւնը՝ տարիքի մասին , ու մտածելով որ ինչ որ ալ ըլլայ չպիտի կրնայ ստուգանքի ենթարկուի մը տունը ներկայացող կնոջ տարիքին վրայ , օրէնքին բացառութեան կը դիմէ ու նախապէս կը հարցնէ :

— Քանի տարեկան էք տիկին :

— Քսան և ութը , աէ՛ր դատաւոր :

Կը պատասխանէ այս վերջինը :

Բարեմիտ ու փորձ դատաւորը որ չէր սխալած իր կանխամտածութեան մէջ , քրմածիմադով մը երգումը սովորական ձեւակերպութեան կը ձեւաւորէ ու կ'ըսէ :

— Շատ լաւ , տիկին , հիմա ձեր երգումն ըրէք և ըսէք ձեր գիտցածը յանուն արդարութեան :

• • •

Դատաստանական խորհուրդի մը մէջ : Նախագահը օր մը կը հարցնէ ամուսնաթողութիւն պահանջող կնոջ մը :

— Տիկին , ամուսինդ առաջները կը սիրէ՞ր քեզի :

— Չափազանց , տէր նախագահ , այնպէս որ զիս տեսած վայրկեանին սիրտը թունդ թունդ կը զարնէր :

— Հիմա . . .

— Հիմա . . . , օ՛հ , հիմա , փոխանակ սրտին ձեւքերը կը գործեն . . . :

ՋԱՌԱՆ ՄՈՅՐԵԱՆ

ԱԶՔԵՐՆԻԴ ԼՈՅՍ

ԳՈՐԾԻ ԳԱԼԻՔ ՆՈՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Հագուիլ , շուիլ եւ ադամանդներով զարդարուիլ , ինչպէս նաեւ սան կարասիներ կոկել ամէն կերպով , առանց քսակնիդ պարպելու :

Ա. Յ. Լ.

Ա Պ Ա Ռ Ի Կ

Մայր ես , աղջկանդ օժիտը կը մտածես՝ դիմէ՛ .
Օրիւնդ ես , շիք և աժան հագուիլ կուզես՝ դիմէ՛ .
Երիտասարդ ես և շիքը կը սիրես՝ դիմէ՛ .
Տարեց ես և ցուրտէն պատարարուիլ կուզես՝ դիմէ՛ .
Տղաքներ ունիս սրնոց պիտոյքը՝ զանկը կը ճոճեցնեն՝ դիմէ՛ .
Ամուսնացու աղջիկ ունիս՝ ըրգանքերու պէտք ունիս՝ դիմէ՛ .
Եկածը կաղանկ , է նուէրներ գնել կը փափաքես՝ դիմէ՛ . . .
Տարին բանի մը անգամ հովանոց գնելէն զգուած ես՝ դիմէ՛ .
Ձեռքդ պարսպ ճամբայ քալել չես սիրեր՝ դիմէ՛ .
Կուզես տունդ կոկել ճաշակուոր կարասիներով՝ դիմէ՛ .
Առաջնակարգ և տոկուն զուգանքերու պէտք ունիս՝ դիմէ՛ .
Կուզես շիք . ճաշակուոր և լաւ տեսակ փողկապիկ ունենալ՝ վերջապէս կուզես ոտից ցլուխ հագուիլ , շրուիլ , պնտիլ :

դիմէ՛ միմիայն

“ՀԷՐՃԱՅԻ” ՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ, ԳՈՐԾՈՒՄԸ ԵՎ ՓՈՂՈՅ ԹԻՒ 13

ուր պիտի գտնես ամէն տեսակ հագուստի , ձեւակերպչի , փանթէզի , ադամանդի , ժամացոյցներու , չղժանիւրու և ամէն տեսակ կարասիներու ճոխ մթերք մը :

ՎՃԱՐՄԱՆՑ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Ապառիկ զնոդներու համար հարիւրին 20 կանխիկ և մնացեալ գումարին հարիւրին 5ը չաքաթական վճարմամբ .

2. Կանխիկ զնոդներու համար հարիւրին 5 զեղչ :

3. Կանխիկ ծախուած ապրանքներէն միմիայն ադամանդեայ գոհարեղէնները երբ գործածուած բայց անշարժ մնացած ըլլան , հարիւրին 10 զեղչով , իսկ ապառիկ ծախուած և անշարժ մնացած միմիայն ադամանդեայ գոհարեղէններն ալ հարիւրին 15 զեղչով ետ կ'առնուին :

ՍՍ.ԿԱՐԼՈՒԹԵՒՆ ԶԿԱՅ

21—30

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

ԴԵՍ ՈՒ ԴԵՆ

— Անցեալ շաբաթի կին մը հինգ զաւակ մէկէն ծնելու բաղդը ունեցած է, հինգն ալ մահ: Զրոյցի մը նայելով բաղդաւոր կինը փափաք յայտնեւ է իր զաւակները նուիրել Ռուս եւ ճաբոնական պատերազմին:

— Զուրկերիոյ մէջ մասօք անուն կոլ մը օրը 68 ֆաւ կար կուտայ: Այս անգիւս կենդանիին տէր մտադիր է 1910 ին Բարիկաւոնեսանհանգեսին ի ցոյց դնել:

— Սպանիոյ մէջ 30 տարեկան երիտասարդ մը, 30 ալլազան լեզուներ կը գրէ եւ կը խօսի եղեր:

— Անգղիոյ մէջ օրիորդ մը երկուփուկէս մէքր հասակ ունենալով, մտադիր է ամուսնանալ երեք մէքրի մօտ երիտասարդի մը հետ: Այս փափաքը երկրագունդին բոլոր լրագրողները հաղորդած են ու դեռ արդիւնք մը չէ գոյացած:

— Ամերիկայի մէջ Միս Հէլէքք անուն օրիորդ մը կը փափաքի ամուսնանալ երիտասարդի մը հետ, պայմանաւ որ պատկուած օրէն մինչեւ մեռած օրը, բաւ մը չարստանէ իրեն ու խօսք մը չի փոխանակուի իրենց միջեւ: (Այս արտակարգ պայմանը վստահ եմ որ մեր Հայ երիտասարդներուն գործին չի գար):

— Մեր Հանրագիտակ Շաբաթաբերին տասն եւ վեց երեսներուն եւ չորս կողներուն մէջ 964,847 գիր կը գտնուին: (Հակառակը պնդողը բոլոր համրէ): Արդ այսչափ գիրը 40 փառա ածան չէ . . . :

— Հաւել եղա՛մ է որ, օրիորդ մը երեսը բուռն փայլու սկսելէն մինչեւ վաղ անցած օրը, 144 ֆաւ կը գործածէ այդ հեռակցող փոսիկէն:

— Տանրմարգայի մէջ սիւկին մը իր նկոյր մասին եղունգը այնքան երկարած է եղեր որ, պատառափողի տեղ կը գործածէ եղեր: (Կը խնդրենք որ մոռնալով չի լուայած գրուել չի երէկ):

— Բարիկի մուրացկաններու տարեկան համաժողովին անդամներէն մին հոր գիւս մը յղացեր է, այն է . . . (լրագրին մնացած մասը պատուած ըլլալուն առաջարկին ինչ ըլլալը չի կրցանք հասկնալ):

— Խալիոյ մէջ օրը 144,865 ֆաւ մաքուսօնիա կապառլի եղեր:

— Հանրագիտակ Շաբաթաբերին մէկ շաբաթուան ծախքը միջին հաշուով 5 1/2 ոսկիի կը հասնի, իսկ Նիւ-Եօք Հեթլինքը 200,000 սթրլինգ:

— Բարիկի Բեռ Հա Շեզ գերեզմանատան մէջ մեռելաբալ Միւսի Օսմառ տարին միջին հաշուով 150,644 մարդ եւ կին կը բաղէ եղեր, իսկ Ս. գիւղի Տեք Կարապետը 175 հաս: (Երկերկու մէքրէն ֆանի՛ դուռ Եան...):

— Ժիւլ Վեռն իր հոգեվարքի վերջին վայրկեաններուն, տասերկու տղ վեպ մը գրեր է բուն իր ձեռովը, *Յերկրէ երկինք* անուն, որ պիտի հրատարակուի մօտ օրէն:

— Ըստ ճաբոնական սովորութեան, նոր հարս մը գիշերը պառկելու ժամանակ մինչեւ որ իր ամուսնոյն ոտները չի լուայ չի կրնար անկողին մտնել: (Վայ այն կնկան որուն ամուսինը երկարագործ է):

— Գամբլ Ֆլամանիօսի վերջին մէկ երկասիրութենէն դատելով, զալ տարի կապոյտ ձիւն պիտի տեղայ եղեր, երկրագունդի մէկ կէտին վրայ, բայց ուր տեղ ըլլալը նշանակուած չէ: (Այս տեսակ գուշակութիւն մը ժամանակին Տեք Երեմիան ալ քրած է եղեր):

— Բօլոնիացի գիտուն մը վերջերս հրատարակած մէկ գիրքին մէջ կը փաստաբանէ թէ, տարին 182 1/2 օր է. մեծանուն գիտունը գիշերները քնանալուն համար օրը 12 ժամ կը հաշուէ:

— Ամերիկացի երիտասարդ մը վերջերս իր ամուսնութիւնը օգտաւարիկի մը մէջ կատարեւ. եւ հոն 60 հոգիի սեղան մը սարքեր է, երկրէն 400 մէքր բարձրեր: (*)

(*) Այս զարմանալի լուրերուն ո՛վ գրած ըլլալը դիտեալ փափաքողները թող հաճին թերթիս կողքին չորս երկար ուշի ուշի աչքէ տնջնել, որ պիտի գտնեն մանր գիրքով գրուած յօդուածագրին անունը:

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿ»-Ի ԹԵՐԹՕՆԸ 10

Հեղինակ՝ ԼՈՒԻ ՊՈՒՍԸՆԱՌ

Թարգմանեց՝ Յ. ՏԵՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

10,000 ՏԱՐԻ

ՄԱՌՆԱԿՈՅՏԻ ՄԸ ՄԷՁ

Մեծ-ծերունի-պարոնը որ հետաքրքրու-
թեամբ մտիկ կընէր թէ տասը հազար տարի
առաջ ալ իրենց պէս օգին մէջ բարձրանա-
լու կարող մարդիկ կային, յարեց։

— Նախածին, կըսէք թէ զիտուններ
ներկայ գտնուելով այդ փորձերուն, չափած
են ենթակային մարմինէն ծորող զօրութիւ-
նը։ Խնդրեմ յայտնեցէք որ ի՞նչ աստիճանի
վրայ էր այդ ուժը։

— Բաւականաչափ, ենթակաները քանի
մը քիւօմէթր փոխադրելու և նոյն իսկ քանի
մը մէթր բարձրացնելու գիտնէն։ Զօրու-
թիւնը, մեր աստիճանը չափով 150 քիւօկ-
րամ հաշուուեցաւ։

— Շատ լաւ։ Ձեր կարծիքովը ի՞նչ է
ծանրութիւնը սա բիւրեղեայ կտորին որուն
վրայ արթնցաք...

— 1500էն 2000 քիւօկրամ... գուցէ
աւելի ալ։

— Այն ատեն տեսէք։

Այս բաները արտասանելով Մերունին ե-
լաւ կամաց մը, ոտքերը հողին վրայ հաս-
տատեց, թեթեւապէս ետի ծռեցաւ և իր
տասը մատները իրարմէ բացած դրաւ բիւ-
րեղի խոշոր կտորին վրայ։ Կարելի է երե-
ւակայել ապշութիւնը Մ. Սենթէզին երբ
տեսաւ որ այս մեծղի զանգուածը արագ կը
սահէր և խուլ չփչփումով մը յատակին գե-
ղատեսիլ մօզայիզին վրայէն կանցնէր, կար-
ծես թէ զօրաւոր մեքենականութիւն մը զայն
յանկարծ քաշած ըլլար։

— Կրնամ, շարունակեց ծերունին ան-
չփոթ կերպով, ուղած կողմին վրայ թաւա-
լիկ զայն...

— Օ՛հ, անօգուտ է այդ, քանի որ հա-
մոզուած եմ թէ ատանկ քաջագործութիւն
մը անկարելի չէ ձեզ համար։

— Ինչպէս ինձի նոյնպէս բոլոր իմ ցե-

ղակիցներու համար աշխարհի ամենէն բը-
նական բանն է, որովհետեւ մեր ուժը ան-
սահման է...։ Ենթադրենք որ երբ ձեր
կուռփը աւելեմ կրկու մատներու մէջ, կըր-
նամ զայն ճզմել, կտրել, կարծես թէ դանդ-
ուած ըլլար անկեանը տակ այս բիւրեղի
կոյտին զոր մէկ շարժումով տեղէն փոխադ-
րեցի։

— Ձեմ կտակածիր։

— Բան մըն ալ։ Ըսէք տեսնեմ թէ դուք
ինչպէս կը բացատրէք այս երեւոյթը։

— Կ'ենթադրեմ որ, պատասխանեց Մ.
Սենթէզ խոհուն, ջիղերէն արտադրուած
է այս ուժը որ մարմիններուն շուրջ կը
կազմէ տեսակ մը ջլային մթնոլորտ՝ կարող
իր շրջանակին մէջ շարժել տալու հաստատուն
իրերը։ Մարդկային մարմինն ալ այս զօ-
րութեան շրջանակին մէջ ըլլալուն համար է
որ կը բարձրանայ։

— Պրալօ՛։ Ուրիշ բացատրութիւն չկըր-
նար տրուիլ արդէն և կը զարմանամ որ հա-
զարաւոր տարիներ առաջ... բայց կը
բաւէ այս նիւթին վրայ խօսածնիս։ Հիմա
ըսէ տեսնեմ ուժ կըզամ ներսդ ձգելու այն
տեղը ուր կը գտնուինք մեկտեղ և առա-
ջարկած նորոքինակ ճամբորդութեանս ձեռ-
նարկելու...։ Ձեր յստակամտութիւնը
կ'ապացուցանէ թէ կատարելապէս արթն-
ցած էք ձեր դարաւոր քունէն, և էական
կէտը հոտ է։ Դալով ձեր մարմնական տո-
կունութեան, կը բաւէ...։ Եթէ տղու
մը չափ ալ տկար ըլլաք, դարձեալ առանց
յոգնելու, առանց վտանգի պիտի կատարէք
այս արշաւանքը որ որքան դիւրին նոյնքան
չահագրգռական պիտի ըլլայ։

— Բացարձակապէս ձեր տրամադրու-
թեան տակ եմ, Մեծ-ծերունի-պարոն և
ինքզինքս ձեր ձեռքերուն մէջ կը դնեմ։

— Ձեր « ձեռքերուն մէջ », շատ ճիշդ ըսիք Նախածին :

Քանի մը վայրկեանէ ի վեր կարգ մը Ուղեղայիններ, ինչպէս կը կոչէր Մ. Սենթէզ, մօտեցած էին երկու խօսակցներուն : Որովհետեւ Մ. Սենթէզ իր ձայնին խստութիւնը մեղմած էր և այլևս վրդովում չէր պատճառէր այդ ծայրայեղօրէն փափուկ և նրբազգած մարդոց, նորեկները կը փութային անոր քով և բարեկամական հետաքրքրութեամբ մը կը դիտէին զայն : Մեծ-ծերունի-պարֆը քանի մը բառ կ'արտասանէ իր քաղցր ձայնով : Այն ատեն անոնք աւելի կը մօտենան Մ. Սենթէզի, որուն մեղմօրէն կը դալին իրենց ձեռքերովը, իրենց բազուկները երկարելով կէս մը ծռած : Մեծ-ծերունի-պարֆը մէջը ըլլալով չինգ հողի էին : Այս աննշմարելի հպումէն Մ. Սենթէզ, ճառագայթայիր, զգաց թէ կամաց մը կը զատուի գետնէն և կը բարձրանայ այն խումբին մէջ, որուն կեդրոնը կը գտնուէր :

— Աս է եղևր այն հրաշապատում ճամբորդութիւնը որուն վրայ կը խօսէիք յարգելի Մեծ-ծերունի-պարֆ, գոչեց Մ. Սենթէզ արշիւ և իր սովորական պաղարները կորսնցուցած :

— Ծաշակիդ եկա՞ւ, Նախածին :

— Հմայուեցա՛յ . . . լեզուս բառ չի գտնիր զիս ողողող ուրախութիւնը արտայայտելու կամ նկարագրելու անճառ երանութիւնս :

Այս վայրկեանին խումբը որ կամաց մը դուրս կը սահէր մեծ բացուածքէ մը, ազատ օդին մէջ ելաւ և կեցաւ 20 մեթր բարձրութեան մը վրայ :

— Գլխու պոռոյտի ենթակայ չէք, յարեց Մեծ-ծերունի-պարֆը : Մնաց որ ոչ մէկ վտանգ կայ ձեզի համար, քանի որ մեր կողմէն թռնուած էք : Մեր մարմինէն ծորող զօրութեան կեդրոնն էք, մեզի հետ մէկ մարմին կը կազմէք կրնայ թուիլ և կը մասնակիք մեր տառնաձայնատու կ'էմիսիին : Հիմա որը կը նախադասուէք : Աւելի կուզէք Թումուլթով փոխադրուիլ ակնթարթի մը մէջ, լոյսի պէս արագ, թէ կամաց մը իջնալ գետնին տեղի մօտ և դիտել իբր հետաքրքիր և փորձ ճամբորդ, այն ամէն տեղերը որոնց վրայէն պիտի անցնինք :

— Եթէ դուք անպատեհութիւն մը չէք գտնիր և եթէ ձեր համակրելի ընկերները կը հաճին բաղձանքիս գոհացում տալ, վերջինը պիտի նախընտրէի . . . :

— Ազատ էք մէկը կամ միւսը որոշելու Նախածին, և մեր հիւրասիրութիւնը ամէն ինչ պիտի ընէ ձեր կամքերը լրացնելու :

— Հազար շնորհակալութիւն, բայց կը փափաքիմ նաև աւելի յոգնութիւն մը չը պատճառել ձեզի . . . :

Խիստ քաղցր, խիստ հաճոյական, աննշմարէն երգիծական խնդուք մը եղաւ միայն պատասխանը Մ. Սենթէզի բարեկամներուն, բայց հասկցու թէ դժուար բան մը պահանջած էր, գոնէ՝ շուրջիներուն դիմագծութենէն դատելով :

Խումբը տկար արագութեամբ մը առաջացած, վայրկեան մը կեցաւ թոյլ տալու համար « Նախապատմական » մարդուն որ առաջին անգամ իր արողովութեանը մէջ դիտէ այն տեղը ուր այնքան անակնունելի կերպով խրած էր իր սառնակոյտին հետ :

Հակառակ իր ուշադրութեան, այս զըննութիւնը ուէ զարմանք չազդեց Մ. Սենթէզի : Միջին կարեւորութեամբ քաղաք մը նշմարեց որուն յրուած, անհամաչափ շէնքերը այլազան բոյսերով չրջապատուած էին, նկարչագեղ խառնափնդորութեան մը մէջ : Հասարակածային հոյակապ տուններուն քով եղբոր պէս կ'ապրէին միջին բարեխառնութեամբ երկիրներու բոյսերը, ինչպէս կարելի էր դատել առաջին ակնարկով իրենց տներէնէն, և ասոնց միացումը շնորհայի գիրկընդխառնում մը առաջ կը բերէր Շէնքերը, գեղեցիկ տեսքով, իրարմէ հեռու և կղզիացած, ընդհանրապէս շատ բարձրացած էին ճարտարապետական նոր ոճով մը : Պատերն ու տանիքները կը փալէին, կը ցոլային արեւին մէջ դաշն և այլերանգ նրբութիւններով :

Մ. Սենթէզ կը դիտէր այս համայնապատկերը, միշտ կեցած կեդրոնը Մեծ-ծերունի-պարֆին և իր ընկերներուն, որոնք ժողովուն ակնարկներ կը ձգէին Նախածինին վրայ, անոր դէմքին ապաւորութիւնները, փոփոխութիւնները, ապշանքը և սքանչալցումը դիտելու համար : Իրենց համար ալ հետաքրքրական էր չրջապատել տասը հազար տարիներ առաջ ապրող նախամարդ մը, և անոր վերլուծութիւնը ընել :

(Շարունակելի)

Արեւմտեւ ՍՍՏՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

Տպագրութիւն Մ. ՍԱՐԵԱՆ
Պապ.Ալի Գասէսի Թ. 38

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԶԱՆՈՐԵԶԵՆԱԳ

Արանց, Կանանց եւ Տղայոց

ԳԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ ԵՒ ԸՆԿ

Կ. Պոլիս, Սուլթան Զաման, Թօփաշեան Խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաց տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբը շահած է բոլոր իրեն գիմող յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հագուստներու, կանանց թէյրդիկներու և տղայոց շիք և դիմացկուն ֆուրիւսներու հախ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հագուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զրէ է. Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին:

29—50

1


(*) ԱՊՐԷԼ

Կ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԹԵՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ



ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԵՒ

ՀՈՏԱԻԷՏ ԹԵՅԵՐ

Կ. Պոլիս, Պահճեֆափու, Ճեղալ-Պեյ խան, քիւ 10



Ա Ն Տ Ե Լ Ի Պ
ԱՍԷՆ ՏԵՍԱԿ ՆՈՒԱԳԱՐԱՆԱՅ ԵՒ ՊԻՏՈՅԻՑ

ՄԱՍՆԱԴՈՐԱԲԱՐ

Ֆոնոկրաֆի եւ Գրամֆոնոն Կրամֆոննի
եւ երկկողմ Բլազֆոնոն, Կեդրոնա-
տեղի Պահճե Դաբու, Հնամի Պեփր
էֆեմոփի կից, Եսլորդ խանի տակ
քիւ 2: Մասնաձիւղ Պահճե Դաբու
քիւ 52:

Վաճառատանս
30 տարիներէ
ի վեր ծախած
ապրանաց տու-
կունութեան և
թէ նորոգու-
թեան մասին
չահած համար-
ւը բազմաթիւ

յաճախորդներուն ճանօթ ըլլալով, կը փութանք յայտարարել թէ՛ այս անգամ նոր
դրութեամբ և կատարելագործեալ լաւ տեսակ Կրամֆոններ և երկու կողմն ալ զատ
զատ եղանակներով Բլազֆոններ բերել տուած ենք, և կրնանք մրցիլ հրապարակի վրայ
դառնալով բոլոր նմանօրինակ ապրանաց հետ, թէ՛ տոկունութեամբ, ձայնի առաւելու-
թեամբ և թէ՛ աժանութեամբ: Գաւառներէն եղած յանճարարութիւնք կը կա-
տարուին ամենայն ուշադրութեամբ և հոգածութեամբ:

Անգամ մը փորձելը բաւական է հաստատելու համար մեր ըսածները Դիմել՝
կեդրոնաւորին: